

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԻՀՈԳԱԲԱՐՁՈՒՄ

ԽԱԼԻՊԵԱՆ ՌԵՍՈՒՄՆԱՐԱՄԻՆԻՆ

Ազգային Խալիպեան Ռւսումնարանին Հոգաբարձուները ընդհանուր քննութեան տակ ձգելով ըստ կանոնի 1860 տարւոյն հաշիւները, եւ ռւսումնարանին բացուած օրէն մինչեւ ցայդմ եղած մատակարարութիւնը եւ ծախքերը մոտագրութեամբ լինելով, տեսան յայտնապէս որ

ա) Կիաթոշակ աշակերտաց տարեկան թոշակը, որ է 250 րուպլի, հազիւ կրաւէ նոյա համար եղած ծախքին, այսինքն կերակրոյ, հանդերձի, ռւսման գործիքներու, եւ բժշկի, վարժապետաց, վերակացուաց ու ծառայից ոռոճիկներուն:

բ) Կիսաթոշակ աշակերտաց վճարածը, որ է 125 րուպլի, եւ ոչ խիստ այն ծախքերուն կրաւէ որ իւրաքանչիւր աշակերտի համար անպատճառ հարկաւոր է. վասն զի տեսնուեցաւ հաշիւներէն, եւ յայտնի փորձով, որ ամէն մէկ աշակերտին տարեկան ծախքն է միջին հաշուով

| | Թուպլի արծար |
|-----------------------------|--------------|
| Կերակրոյ համար | 75 |
| Հանդերձի, կօշկաց եւ գլխարկի | 52 |
| Լուացքի | 8 |
| Գրքի, թղթոյ, եւ այլն | 12 |
| Դեղի | 5 |

Բնդ ամենայն 130:

Արդ Հոգաբարձուները մոտածեցին որ ռւսումնարանին ծախքերը կարելի չէ թեթեւցընել՝ առանց այժմու չափաւոր եւ վայելուչ ապրուստին վրայ զգալի փոփոխութիւն ընելու, զոր արժան չեն տեսներ: Ռւրիշ կողմանէ ալ աչքերուն առջեւն է այն գժուարութիւնը՝ զոր ռւնին միջակ վիճակի ծնողք՝ տարին 250 րուպլիէն աւելի փող վճարելու

իրենց որդւոցը գաստիարակութեանը համար: Ռւսակի որոշեցին որ

Նախ լիաթոշակ աշակերտաց տարեկան տուրքը մնայ առաջուան պէս 250 րուպլի. անկից իզատ՝ առաջին տարին մէկ անգամ մը վճարուելու հանդերձագինը՝ 50 րուպլի, եւ ճանապարհի ծախքը:

Երկրորդ, այսուհետև առանձին կիսաթոշակ աշակերտ չառնուի ամենեւին:

Երրորդ, երբոր երկու եղբարք իմիասին յուղարկուին ռւսումնարանը, մէկուն համար վճարուի տարին 250 րուպլի, եւ հանդերձագինը՝ 50 րուպլի. իսկ միւսին համար 175 րուպլի, եւ հանդերձագինը դարձեալ 50:

Չորրորդ, արդէն ռւսումնարանին մէջ գտնուող կիսաթոշակ աշակերտաց ընդունելութեան պայմանները առաջ ինչպէս որ գրուած են՝ այնպէս անփոփոխ մնան՝ մինչեւ որ իրենց ռւսման ընթացքը աւարտեն: Բայց այն չքաւոր եկեղեցականաց որդւոցը համար՝ որ արդէն ռւսումնարանին մէջ են, եկեղեցական գումարներէն այժմէն սկսի ռւսումնարանը թոշակ առնուլ այս նոր կարգագրութեան համեմատ, 1861 տարւոյս սկիզբէն հաշուելով. այսինքն ամենայն աշակերտի՝ իբրեւ լիաթոշակ աշակերտի համար 250 րուպլի, իսկ կիսաթոշակին (այսինքն երեսը երկու եղբարք են իմիասին՝ մէկունը) 175:

Հինգերորդ, ձրիավարժ աշակերտի տեղ մնացած ըլմնելով, եւ եթէ յանկարծ տեղ բացուի՝ արդէն նշանակեալ պատանիք պատրաստ գտնուելով, մինչեւ որ նոր յայտարարութեամբ չժանուցաւի՝ ամենեւին նոր ձրիավարժ աշակերտ չընդունուի: